

Լ. Բ. Ք Ո Ւ

ԱՆԴՐԿՈՎԿԱՍԻ ԵՂԲԱՅՐԱԿԱՆ ԺՈՂՈՎՈՒՐԴՆԵՐԻ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆԸ ՆՎԻՐՎԱԾ ՑՈՒՑԱՆԱԴԵՍ

Հայկական ՍՍՌ Գիտությունների ակադեմիայի Մ. Արեղյանի անվան Գրականության ինստիտուտը կազմակերպել է հատուկ ցուցահանդես՝ նվիրված Անդրկովկասի եզրայրական ժողովուրդների գրականությանը: Ցուցահանդեսի նպատակն է վրացական, հայկական և ադրբեջանական գրականության ցուցադրմամբ վեր հանել Անդրկովկասի երեք հարևան բախտակից ժողովուրդների բազմադարյան համերաշխությունը, համագործակցությունն ու բարեկամությունը, որ Սովետական իշխանության տարիներին դարձել է ստալինյան անխզելի եղբայրություն:

* *

Ցուցահանդեսի «վաղ շրջան» բաժնի էքսպոնատները ծանոթացնում են մեզ երեք ժողովուրդների հանճարեղ էպոսների և վաղ դարերի գրողների հետ: Այդ նյութերը ցույց են տալիս, որ հայերը, վրացիները և ադրբեջանցիները ոչ միայն դարեր շարունակ ապրել են կողք-կողքի՝ որպես խաղաղասեր, հաշտ և սրտակից ժողովուրդներ, այլև համագործակցել ու միասին պայքարել են օտարերկրյա զավթիչների դեմ, պաշտպանել ու պատսպարել են մեկը մյուսին՝ թե խաղաղ կյանքում, թե ռազմի դաշտում: Այս տեսակետից ցայտուն օրինակներ են սկսանում Դավիթ հերոսական էպոսը, վրացական Նշանավոր Ամիրանը, ադրբեջանական հայտնի «Քյոռ-Սղլին» մեր երեք ժողովուրդների ամենալավագույն ձգտումների և զգացումների գեղարվեստական ընդհանրացումները:

Դավիթը ոչնչացնում է օտարերկրյա զավթիչներին, սիրո և հաշտության կոչ անելով աշխատավոր ժողովուրդներին, Քյոռ-Սղլու հետ ձեռք-ձեռքի կոճում են տարբեր ժողովուրդների մարդիկ՝ ընդդեմ բռնակալների: Ամիրանը մեծ սիրով ընդունում է Մհերին՝ սիմվոլացնելով հայ և վրաց ժողովուրդների բախտակիցներ և ուղեկիցներ լինելու իդեալը:

Այսպիսի հումանիստական գաղափարներով ու զգացումներով են հագեցված Շոթա Ռուսթավելու, Նիզամի Դյանբեկի, Սայաթ-Նովայի անմահ ստեղծագործությունները, որոնք հավասարապես սիրելի են մեր ժողովուրդներին: Բազմաթիվ էքսպոնատներ ցույց են տալիս, որ վրացական ու ադրբեջանական ժողովուրդների զավակները ամենաբարձր գնահատականն են տվել հայ հանճարեղ էպոսին (Միմ. Զիկովանի, Ս. Վուրդուն և ուրիշներ), հայ գրողները սիրով մշակել են ադրբեջանական հուշակավոր «Քյոռ-Սղլին» (Ռ. Պատկանյան, Ղ. Աղայան, Սարմեն և ուրիշներ), ըստ արժանվույն գնահատել են Նիզամի Դյանբեկին, Շոթա Ռուսթավելուն (Արաղի, Ավ. Իսահանյան, Գ. Դեմիրճյան, Ստ. Զորյան, Ն. Գարյան, Գ. Սարյան, և ուրիշներ) չերմ և սրտառույ բանաստեղծություններ են ձոնել նրանց (Հո. Պողոսյան, Հովհ. Շիրազ, Գ. Բորյան, Հ. Սահյան և ուրիշներ): Թարգմանվելով մի քանի անգամ և տարբեր լեզուներով, թե նշած էպոսները, թե մյուս ստեղծագործությունները լայնորեն տարածվել են ոչ միայն Անդրկովկասում, այլև ամբողջ Միության մեջ և մտել համաշխարհային գրականության գանձարանը:

էքսպոնատների մեջ ուշագրավ է «Վաղրենավորի» առաջին հայ թարգմանիչ Սարգիս Բաստամյանի կարծիքը և վկայությունը «Վաղրենավորի» և նրա նկատմամբ հայ ժողովրդի ունեցած վերաբերմունքի մասին: Վերա գրողն է Շոթա Ռուսթավելու էս մարդը ինքան հարգելու է իր վրացիների մեջը, որ վեց հարյուր տարի է սրա շինած բանը կարդվում է, ինչպես Հոմերոսի շինածները կարդվում են ուրիշ ազգերի մեջ: Թիֆլիզեցի հայրը միշտ սիրել են Ռուսթավելի գրածները»:

Յուցահանդեսի այս բաժնում զրված են նաև ուրիշ գրողների նկարներն ու նրանց ստեղծագործությունները (Խաբանի-Շիրվանի, Դավիթ Գուրամիշվիլի, Նահապետ Քուչակ, Վադիֆ, Բեսիկի, Նաղաշ-Հովնաթան և ուրիշներ), ինչպես նաև արժևորավոր հոգվածներ, ուսումնասիրություններ՝ նվիրված Անդրկովկասի ժողովուրդների տնտեսական, բաղադրական ու կուլտուրական կապերին, փոխհարաբերություններին (պրոֆ. Մելիքսեթ-Քեկի «Վրաց աղբյուրները Հայաստանի և հայերի մասին պրոֆ.-դոկտոր Մկրյանի «13—18-րդ դարերի հայ աշխարհիկ գրականությունը», Գ. Արուստիյանի «Վրաց պատմության հին հայերեն թարգմանությունը», Գ. Անտոնյանի «Նիզամին և հայ գրականությունը» և այլն)։

Յուցահանդեսի «Նոր շրջան» բաժնում ցույց է տրվում, որ Անդրկովկասի ժողովուրդների բարեկամությունն ընդլայնվել ու խորացել է մեր ժողովուրդների տնտեսական, բաղադրական ու կուլտուրական կյանքի զարգացմանը զուգընթաց և այս գործում պատմական խոշոր դեր է կատարել ոուս մեծ ժողովուրդը։ Ազատելով Անդրկովկասի բախտակից ժողովուրդներին արևելյան պատերազմի դաժան ճնշումներից ու հալածանքներից, ոուս մեծ ժողովուրդը զարկ է տվել նրանց նյութական ու հոգևոր ուժերի բազմակողմանի զարգացմանը։ Մեր ազատատենչ ժողովուրդներն իրենց առաջավոր զավակների շուրթերով՝ խարազանելով ցարիզմը և նրա բռնակալ ուժերը, ողջունել են ոուս փրկարար բանակի մուտքը Անդրկովկաս։

Բնորոշ են այս տեսակետից Խ. Արովյանի, Մ. Ֆ. Ախունդովի, Նիկ. Բարաթաշվիլու կյանքն ու ստեղծագործությունները պատկերող էքսպոնատները, որոնք հայ, վրաց և ադրբեջանական նոր գրականության մյուս լավագույն ներկայացուցիչներին նվիրված նյութերի հետ միասին (Միք. Նալբանդյան, Գ. Մերեթելի, Նաթևան, Գ. Սունդուկյան, Ակ. Մերեթելի, Մ. Ա. Սարիր, Հովհ. Թումանյան, Ալ. Ղազարբեկ, Վեգիլով, Իլ. Ժավադադե, Մուլա-Նասրեդին, Բաֆֆի, Աղայան, Գոգերաշվիլի, Հակվերդիև, Շիրվանզադե, Վ. Տերյան և ուրիշներ), որպես խոսուն վկաներ, ցույց են տալիս Անդրկովկասի 19-րդ դարի խոշոր գրողների ու մտածողների շերմադին վերաբերմունքը ոուս մեծ ժողովրդի նկատմամբ և վեր են հանում Անդրկովկասի ժողովուրդների բարեկամության զարգացման նոր աստիճանը։

«Վերք Հայաստանի» ռեբուլենչ վիպից, «Թուրքի աղջիկ», «Հազարփեշեն» և ուրիշ երկերից, ինչպես և հոգվածներից վերցրած օրինակները ցույց են տալիս Խ. Արովյանի շերմագին սերը Անդրկովկասի ժողովուրդների, հատկապես ոուս ժողովրդի նկատմամբ։ Ռուս մեծ ժողովրդի, նրա առաջավոր կուլտուրայի և գրականության ջատագով Մ. Ֆ. Ախունդովի, վրաց նոր գրականության հիմնադիր Նիկ. Բարաթաշվիլու գործերը և նրանց վերաբերյալ նյութերը հստակորեն ցույց են տալիս այն սերն ու համակրանքը, որ վայելում են նրանք մեր ժողովուրդների մեջ՝ Արովյանի հետ միասին։

Այսպես, հայ պոետը չերմ տողեր է նվիրում Նիկ. Բարաթաշվիլուն՝ վրացական եղբայրական ժողովրդի հետ միասին ցավում նրա կորուստը (Հ. Թումանյան «Ն. Բարաթաշվիլու դամբանի վրա»), վրացի պոետը՝ Ի. Գրիշաշվիլին ի սրտե փառաբանում է Խ. Արովյանին, նրա մասին գրելով՝ «Դու մտերիմ, դու մեր եղբայր» և այլն¹։

Այս բաժնի էքսպոնատների մեջ նշանակալից են ոուս առաջավոր գաղափարախոսությամբ սնված ու դաստիարակված հայ մեծանուն ուղուցիոներ-դեմոկրատ Միքայել Նալբանդյանին վերաբերող նյութերը։

Գ. Սունդուկյանի և վրաց գրական-թատերական գործիչների հետ նրա ունեցած կապերին նվիրված նյութերի մեջ մենք տեսնում ենք ժողովուրդների բարեկամության ուրիշ փայլուն օրինակներ։ Սունդուկյանը հաճախ է շեշտել, որ իրեն «միապես սիրելի են եղել Անդրկովկասի եղբայրակից ժողովուրդները»²։ Մեր դրամատուրգի երկերն էլ հավասարապես հարազատ են մյուս ժողովուրդներին. դրա ապացույցն են «Պեպոյի» վրացերեն և ադրբեջաներեն թարգմանությունները, այն հեռագրերը, նամակները, բանաստեղծությունները և այլն, որոնք ուղղված կամ նվիրված են նրան։ Վրաց ականավոր բանաստեղծ, ժողովուրդների բարեկամության երգիչ Ակակի Մերեթելին իր ժողովրդի սերն է դրել Սունդուկյանին նվիրված ոտանավորի հիմքում, սիմվոլացնելով մեր ժողովուրդների եղբայրությունը։

¹ «Գրական թերթ» 1948 թ. № 36։

² «Տարազ», 1901 թ.։

որու հաւես, իսկ ես մի վրացի,
Բայց մենք հարազատ եղբայր ենք իրարան¹

Ժողովուրդների բարեկամության, դեմոկրատիզմի գաղափարներով է հագեցած աղբյուրա-
նական մեծ բանաստեղծ Մ. Ա. Սարգիսի ստեղծագործությունը: Դրա փայլուն օրինակներից է
Նրա հայտնի «Ինտերնացիոնալ» ոտանավորը:

Հայ և աղբյուրանական աշխատավորների սերտ բարեկամությունը ցուցադրող ուշագրավ
էքսպոնատ է Ջ. Մ. Կուլի-Ջադեի «Մոլլա Նասրեդդին» ժուռնալի էջերից վերցրած «Սատանան
և հայ-աղբյուրանական աշխատավորները» բազմիմաստ նկարը: Սատանան ցարիզմն է, որ խա-
բելով կռվեցնում է աշխատավորներին: Բայց վերջիններս շուտով հասկանում են իրենց սխալը,
հաշտվում և համբուրվում, իսկ սատանան գլխիկոր հեռանում է...

Ժողովուրդների միջև երկպառակությունը, թշնամանքը — արմատազուրկ, վերին խավերի
կողմից սերմանված անցողիկ երևույթներ են, իսկ սերն ու բարեկամությունը՝ խորն են, դա-
րավոր և հարատև: Այս գեղեցիկ միտքն է, որ ընդհանրացման մեծ ուժով, կոնկրետ ու տի-
պական մի պատկերի միջոցով բացահայտել է նաև հայ ժողովրդի մեծ բանաստեղծ Հովհ.
Թումանյանը: Պատմելով կամուրջի վրա պահակ կանգնած հայ և վրացի զինվորների սրտա-
ռուչ բարեկամության մասին, Շ. Դագիանիի ընդունշամբ «Ժողովուրդների եղբայրության բա-
րոզիչը»՝ Հ. Թումանյանը, 1920 թվին գրել է. «Թշնամությունը, որ ստեղծված է ժողովուրդ-
ների մեջ, ժամանակավոր է, իսկ սերն ու եղբայրության զգացմունքը բնական և շատ ավելի
ուժեղ, քան կարծում են մեզանում»:²

Ժողովուրդների բարեկամության շատ պայծառ էջեր է թողել անմահ Թումանյանը: Ան-
գրկովկասի ժողովուրդների մասին նա դիպուկ է ասել.

«Մենք հո եղբայր ենք դարերից ի վեր,
Մեզ հո միևնույն կրակն է տալու» («Հաշտություն»):

Իրեն հատուկ լավատեսությամբ Թումանյանը գրել է. «Ես հավատում եմ գալու է այն օրը,
երբ բոլոր շովինիստների ջանքերին հակառակ հաղթանակելու է ժողովուրդների միության ու
եղբայրության գաղափարը, ազատության մեջ ավելի ու ավելի են ամրանալու մեր դարավոր
եղբայրական կապերը, և մեր ինքնուրույնությունը չբեղ ու ինքնատիպ ծաղկելու է մեր գեղար-
վեստի ու գրականության մեջ»:³

Անդրկովկասում սովետական կարգերի հաստատումով իրականացան մեծ պոետի պայծառ
երազանքները:

Անդրկովկասի ժողովուրդների բարեկամության ամենաբարձր աստիճանը մենք տեսնում
ենք սովետական շրջանում՝ սովետական իրավակարգում:

Ցուցահանդեսի «Սովետական շրջան»-ը սկսվում է լենինյան-ստալինյան ազգային իմաս-
տուն բաղաբականությանը նվիրված մի հատուկ բաժնով: Այստեղ տեսնում ենք Մարքսի, էն-
գելսի, լենինի, Ստալինի հանճարեղ աշխատությունները, ուղեցույց մտքերն ու ասույթները
ազգային հարցի մասին, ինչպես նաև լենինի և ընկեր Ստալինի զինակիցների ու աշակերտնե-
րի գործերը:

Այս բաժնում ընդգծվում է, որ սովետական կարգերի հաստատումը նոր դարագլուխ բա-
ցեց մարդկության պատմության մեջ, այդ թվում և Անդրկովկասի ժողովուրդների կյանքում:
Վերացվեցին ազգային ճնշումները: Հաստատվեցին ազգերի միջև իրավահավասարություն, հա-
մերաշխություն, փոխադարձ բարեկամություն:

Ողջունելով Կովկասի ազատ ռեսպուբլիկաններին, մեծ լենինը մարգարեաբար գրեց.

«Ջերմագին ողջունելով Կովկասի սովետական ռեսպուբլիկաններին, ես ինձ թույլ եմ տալիս
հույս հայտնել, որ նրանց սերտ միասնությունը կստեղծի ազգային խաղաղության մի այն-
պիսի օրինակ, որ չի տեսնված բուրժուազիայի օրոք և անհնար է բուրժուական իրավա-
կարգում»:⁴

¹ «Գրական թերթ» 1937, № 9:

² «Պրոլետարիատի գրականություն», 1933 թ., № 3:

³ «Գրական թերթ» 1946 թ. № 6:

⁴ Վ. Ի. Լենին, Նրկեր, հատ. 28, էջ 191, III-րդ հրատ.

Յուզահանդեսի այս բաժինը վկայում է, որ մեծ առաջնորդի խոսքերը դարձել են իրականություն։ Սովետական ազգերի ու ժողովուրդների ստալինյան ընտանիքում Անդրկովկասի ժողովուրդների դարավոր բարեկամությունը դարձել է անբաժանելի եղբայրություն՝ որը բուլղակյան պարտիայի մեծագույն հաղթանակներից մեկն է, սոցիալիզմի համաշխարհային-պատմական նվաճումներից մեկը։

Բուլղակյան պարտիայի իմաստուն ղեկավարությամբ ստեղծված ու զարգացած ՍՍՌՄ ժողովուրդների անխզելի բարեկամության ամրապնդման գործում պատմական խոշոր դեր է կատարել եղբայրական ուսման մեծ ժողովուրդը։ Յուզահանդեսում շեշտվում է ուսման մեծ ժողովրդի, նրա կուլտուրայի ու գրականության դերը Անդրկովկասի ժողովուրդների ազատագրման և նրանց նյութական ու հոգևոր ուժերի զարգացման գործում։

Մասնավորապես ուսման կլասիկ և սովետական գրականությունը, Պուշկինի, Տոլստոյի, Օստրովսկու, Բելինսկու, Գոգոլու, Մայակովսկու և շատ ուրիշների ստեղծագործությունները, բացահայտում են այն փաստը, որ սովորելով գեղարվեստական խոսքի ուսման հանճարեղ վարպետներից, սովետական եղբայրական ռեսպուբլիկաների, այդ թվում նաև Անդրկովկասի գրողներն ստեղծում են բովանդակությամբ սոցիալիստական, ձևով ազգային գրականություն, հարստացնում ու զարգացնում սովետական բազմազգ գրականությունը։

Անդրկովկասի եղբայրական ժողովուրդների սովետական գրականության բաժինն սկսվում է սովետահայ պոեզիայի հիմնադիր Հակոբ Հակոբյանին, վրաց ռևոլյուցիոներ գրող Էզնատե Նինոշվիլուն, ադրբեջանական մեծագույն դրամատուրգ Ջաֆար Ջաբարլին և սովետահայ արձակի ավագագույն ներկայացուցիչներից Արազուն նվիրված էքսպոնատներով։

Հ. Հակոբյանի երկերը, նրա մասին եղած նյութերը, նրա «Թիֆլիս», «Բաքու» և մյուս բանաստեղծությունները ցույց են տալիս, որ բուլղակ պոետը չեմոռեն սիրել է սովետական, այդ թվում Անդրկովկասի ժողովուրդներին, երգել է նրանց բարեկամությունը և իր հերթին սիրվել ու գնահատվել է նրանց կողմից։

Վրացական ռևոլյուցիոներ գրող Էզնատե Նինոշվիլու վերաբերյալ նյութերից պարզվում է, որ նրա ստեղծագործությունները թարգմանվել և սիրով ընկալվել են մեր ժողովուրդների կողմից (ինչպես «Գրագիր Մոսին»), արժանանալով բարձր գնահատականի։ Նույնը պետք է ասել նշանավոր դրամատուրգ Ջ. Ջաֆարլիի մասին, որը վարպետորեն պատկերել է ռուսների, վրացիների, հայերի և ադրբեջանցիների համատեղ պայքարը հանուն ազատության («1905 թվին» և այլն)։

Նշած գրողների, ինչպես նաև Մ. Արազու, Ալլ. Իսահակյանի, Մ. Ս. Օրդուրադիի, Դ. Դեմիրճյանի, Շ. Դադիանու, Ի. Դրիշաշվիլու, Ստ. Զորյանի, Ս. Ս. Ախունդովի, Դ. Տաբիձի, Ս. Էուլու, Ն. Զարյանի, Ս. Վուրդունի, Դ. Լեոնիձեի, Մ. Ռահիմի, Դ. Աբաշիձեի, Դ. Սարյանի, Ս. Ռուստամի, Ս. Մաշաշվիլու, Հովհ. Շիրազի և շատ ուրիշների ստեղծագործությունները հնարավորություն են տալիս ծանոթանալու Անդրկովկասի եղբայրական ժողովուրդների սովետական գրողների շնորհակալ աշխատանքին՝ ժողովուրդների բարեկամության ընդլայնման ու խորացման պատմավոր գործում։

Հայտնի է, որ ժողովուրդների ստալինյան բարեկամությունը սովետական գեղարվեստական գրականության իդեական առանցքն է, և դրված է սովետական ջերմ ու կենսատու հայրենասիրության հիմքում։

«Սովետական հայրենասիրության ուժն այն է, — ասում է ընկեր Ստալինը, — որ նրա հիմքը ոչ թե ռասայական կամ նացիոնալիստական նախապաշարմունքներն են, այլ ժողովրդի խորին նվիրվածությունն ու հավատարմությունն իր Սովետական Հայրենիքին, մեր երկրի բոլոր ժողովուրդների եղբայրական համագործակցությունը»¹։

Բացահայտելով այս փաստը, ցուցահանդեսի սովետական բաժինը ընդհանրացնում և իմաստավորում է զարգացման այն նոր ու բարձր աստիճանը, որին հասել է մեր երկրում ժողովուրդների բարեկամությունը՝ շնորհիվ լենինյան-ստալինյան իմաստուն բաղաբանության։ Մի շարք հեղինակների և գեղարվեստական երկերի հորեղանակներն նվիրված նյութերը («Սասունցի Դավիթ», «Վազրենավոր», Նիդամի Գյանջևի, Խ. Արովյան և այլն) թարգմանական գրականության բազմաթիվ օրինակները, առանձին ուսումնասիրություններն ու հոդվածները (էդ. Թոփչյան, Ս. Վուրդուն, Ի. Դրիշաշվիլի, Ն. Զարյան և ուրիշներ) այս բոլորը ռեալ գծերով

¹ Ի. Վ. Ստալին — «Սովետական Միության Հայրենական Մեծ պատերազմի մասին» 1950 թ. նրկան. էջ 192։

վեր են հանում սովետական ինտերնացիոնալիզմի, հումանիզմի էությունը, ապացույց են այն փաստի, որ երբեք այդքան միաձուլվելու անբակտելի չի եղել ժողովուրդների բարեկամությունը, ինչպես սոցիալիստական մեր մեծ հայրենիքում:

Այս տեսակետից բնորոշ է, օրինակ, սովետահայ գրողների շափածո նամակը՝ «Եղբայրական ռեսպուբլիկանների ժողովուրդներին»:

Այստեղ խտացված է սովետական ինտերնացիոնալիզմի, ՍՍՌՄ ժողովուրդների ստալինյան բարեկամության և մեր երկրի հզորության ու անպարտության իդեալները: Դիմելով ազնիվ եղբայր ուսման մեծ ժողովրդին՝ և եղբայրական բոլոր ռեսպուբլիկանների ժողովուրդներին, նամակի հեղինակները գրում են.

«Եվ անխափան է երթը մեր,
ինչպես երթը բուրդիդ,
Քանզի ունենք մեծ միություն
ամուր, ինչպես գրանիտ.
... Եվ նայում ենք մենք աշխարհին,
որ լի է ժանտ մուրցեքով,—
Երկու հարյուր միլիոնանոց
ժողովրդի աչքերով»¹

Բազմազգ ու բազմալեզու սովետական ժողովուրդների ստալինյան եղբայրությունը դիմացել է բազմաթիվ փորձությունների, Հայրենական Մեծ պատերազմում ավելի է զոդվել ու ամրացել: Ցուցահանդեսում ընդգծվում է, որ Անդրկովկասի ժողովուրդների բազմադարյան բարեկամությունը, համատեղ աշխատանքի ու պայքարի նրանց պայծառ տրադիցիան նոր ուժով է հանդես եկել սովետական իրավակարգում, մասնավորապես Հայրենական Մեծ պատերազմի տարիներին: Շեշտվում է, որ այս գործում նշանակալից դեր է կատարել գեղարվեստական գրականությունը՝ որպես ժողովրդի բարոյական-բաղադրական միասնությունն ամրապնդող լավագույն սիւններից մեկը:

Այս բաժնի նյութերը բացահայտում են այն փաստը, որ սովետական գրողները չունեն այլ իդեալ, բան կոմունիզմի հաղթանակը, որն ինքնին նշանակում է ազատություն, երջանկություն, խաղաղություն, որոնց մասին երազել է մարդկությունը, աշխատավոր ժողովուրդը:

Ցուցահանդեսում դրված էքսպոնատները, սկսած գեղարվեստական գրքերից մինչև առանձին մտքերի ու ասույթների ֆոտոպատճենները, ընդգծում են սովետական ժողովրդի խաղաղասիրական ձգտումները, նրա հերոսական գործերն ու մտքերը՝ սոցիալիզմի կառուցման, Հայրենական Մեծ պատերազմի և հետպատերազմյան տարիներին:

Վերցնենք, օրինակ, մեծանուն բանաստեղծ Ավ. Իսահակյանին նվիրված նյութերը, որոնցից երեւում է, որ նա ոչ միայն երգել է Անդրկովկասի ժողովուրդների համար «հանուր-ընդհանուր» ազատություն (սկզբնական զանգը), փառաբանել է եղբայրական վրացական ժողովրդի վերածնունդը (սկզբնական զանգը), այլև հիշեցնելով մեր ժողովուրդների բարեկամությունը, պրոպագանդել է այդ իդեալն իր մի շարք ելույթներում, հոգովածներում:

Ժողովուրդների բարեկամության չորս պրոպագանդիստներից է Վրաստանի պոեզիայի արդի ականավոր ներկայացուցիչներից Ի. Դրիշաշվիլին: Նրան նվիրված նյութերից երևում է այն շնորհակալ աշխատանքը, որ կատարել է պոետը հայ գրականությունը վրացերեն թարգմանելու գործում (սկզբնական զանգը և այլն): Նա հայ գրականության մասին կարդացել է գեկուցումներ (ինչպես՝ Գ. Սունդուկյան), միշտ ձգտել է ամրացնել մեր ժողովուրդների սերտ բարեկամությունը:

«Դարերի ընթացքում,— գրել է նա,— հայ և վրաց ժողովուրդների լավագույն որդիները միասին են պաշտպանել իրենց հայրենիքի ազատությունն ու պատիվը: Նրանք ժառանգել են փոխադարձ բարեկամության ու սիրո հիանալի տրադիցիաներ:

Ուրեմն շարունակենք ամրացնել ու անդուլ կերպով խորացնել մեր ժողովուրդների ստալինյան սրբազան բարեկամությունը»²

Աղբյուրներից ժամանակակից խոշոր բանաստեղծ Սամեղ Վուրդունին նվիրված նյութ-

¹ «Դրական թերթ» 1940, №32:

² Նույն տեղում:

թերը բացահայտում են նրա ստեղծագործության իդեական հագեցվածությունը, պարտիականությունը, ինչպես նաև պոետի անխոնջ աշխատանքը՝ ուղղված ժողովուրդների բարեկամության գործին: Նրա մի շարք հոգվածները, ելույթները (Խ. Աբովյանի և «Սասունցի Դավթի» մասին, նրա ելույթը Անդրկովկասի ժողովուրդների հակաֆաշիստական միտինգում և այլն), ցույց են տալիս, որ նա հպարտությամբ է հիշեցնում մեր երեք ժողովուրդների պատմական բարեկամությունը, արժեքավորում այդ բարեկամության մեծ գործին ծառայող գրողներին: Երևանում «Սասունցի Դավթի» հումանիստական ոգու մասին, շեշտելով Դավթի և Քյոռ-Օղլու ու հանձին նրանց հայ ու ադրբեջանական ժողովուրդների եղբայրությունը, պոետը գրում է.

«Սեզ, սովետական գրողներին և գիտնականներին անհրաժեշտ է ստեղծել նոր հատորներ և մեր սոցիալիստական սերնդին ցույց տալ մեր ժողովուրդների բազմադարյան եղբայրական կապերն ու շահերի ընդհանրությունը»:

Նույնը պետք է ասել ականավոր պոետներ Գ. Հեոնիձեի և Ն. Ջարյանի մասին, որոնց բաղաբականապես հագեցված ստեղծագործությունները, մանավանդ մեծ առաջնորդ ընկեր Ստալինին նվիրված բարձրարվեստ գործերը (Գ. Հեոնիձե «Ստալին»-ը) միութենական պոեզիայի զարդերից են: Ցուցահանդեսում շեշտվում է, որ Անդրկովկասի սովետական գրողները, բոլորն առանց բացառության, երգել ու երգում են ժողովուրդների ստալինյան բարեկամությունը, նրա հզորությունն ու անպարտելիությունը:

* * *

Անհրաժեշտ է շեշտել այն արժեքավոր նվերները (սեփական և թարգմանական գործերի ինքնագրերը, մակագրությամբ գրքերը, լուսանկարները և այլն), որ ստացվել են վրացական ու ադրբեջանական գրողներից ու դրվել ցուցահանդեսում:

Ցուցահանդեսն ամբողջությամբ, իր բոլոր բաժիններով, կարիք ունի հետագա լրացման ու հարստացման: Տեղի սղությունը թույլ չի տվել ներկայացնել մի շարք գրողների, գրականագետների երկերը:

Ծանոթացնելով Անդրկովկասի եղբայրական ժողովուրդների գրողների ու գրական ստեղծագործությունների հետ, ցուցահանդեսը վեր է հանում ժողովուրդների բարեկամության պայծառ տրագիցիան, ուսուցանում՝ ընդլայնել ժողովուրդների փոխադարձ բարեկամությունը, սովետական ժողովուրդների ստալինյան եղբայրությունը, որը մեր երկրի հզորության, անպարտության հաստատուն գրավականն է:

«ՍՍՌՄ ժողովուրդների փոխադարձ բարեկամությունը — ասում է ընկեր Ստալինը, — մեծ, լուրջ նվաճում է, որովհետև բանի այդ բարեկամությունը գոյություն ունի, մեր երկրի ժողովուրդները ազատ և անպարտելի կլինեն»:

Ս. ՄԱՆՈՒԿՅԱՆ

